ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 13-Ա

09/06/2020

05-013-0221-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Կարեն Վալերիկի Ավագյանի 05.06.2020թ. դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 11.11.2019թ. թիվ 40 որոշումը:

2. Հաշվի առնելով Աստղաձոր համայնքի շահերը հավանություն տալ Աստղաձոր համայնքի բնակիչ Կարեն Վալերիկի Ավագյանին (ծնվ. 14.10.1978թ.) սեփականության իրավունքով պատկանող 05-013-0221-0023 կադաստրային ծածկագրով , Մարտունի-Վարդենիս մայրուղի 3 հասցեում գտնվող 0.3006 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակությանը , իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի կազմից փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության: Նշված հողամասում հետագայում օրենքով սահմանված նորմերով մեկ հարկանի առևտրի շենք կառուցելու համար:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին գործընթացը կազմակերպելու համար համապատասխան հողաշինարարական գործերը ներկայացնելու Գեղարքունիքի մարզպետին՝ ՀՀ Կառավարության ,,Հողերի օգտագործման

ժամանակավոր սխեմաների համաձայնեցման,, միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌԱՖԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**